

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**ՊԵՏՈՒԹԻՒՆ.**

**ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ.**

Պերբաստանն անելով ու ընդարձակուելով զաւելում է ազգ իսկ երբ ազգը ստանում է իրաւաբանական հասարակութեան կերպարանը և ենթարկուում է իրաւատական կարգի որ որոշուում է իշխանութեան և հարստակների մէջ եղած յարաբերութեամբ հանդէս է գալիս պետութիւնը (Թագաւորութիւնը)։ Մինչդեռ գերբաստանը ներկայացնում է մեզ սիրոյ և յարգանաց Թագաւորութիւն, ընդհակառակն պետութիւնը ներկայանում է մեզ իբրև իրաւունքի և արդարութեան Թագաւորութիւն, ուր անհատական համակրութիւնը որանք գերբաստանի մէջ նշանակութիւն ունին կորցնում են իրանց կշիռն և ուր անհատներն ունին նշանակութիւն միայն իբրև անձինք, որոց ազատութիւնն ենթարկուում է պետութեան ընդհանուր օրէնքին։ Իրաւունքը մարդկային կամքի համար օրէնքով որոշուած չափն ու սահմանն է, իսկ արդարութիւնն իմաստութեամբ որոշուած կանոնաւորող և կարգադրող զօրութիւն է, որ պահպանում է և պաշտպանում իւր կարգը մարդկային կամայականութեան և հաճոյից գէմ ուստի և ոչ միայն օրէնադրական այլ և գաղափարների ու հատուցման բնաւորութիւն ունի։ Բայց պետութիւնը միայն արդարութեան ասպարէզ է։ Նորա հրամաններն անշուշտ և անմիջապէս բարոյական չեն։ Նա ոչ միայն ասում է «պետք է» այլ և «գուպարտական ես» ու կարող է «ստիպել» որ նորա օրէնքները կատարուին։ Թէև նորա օրէնքները կարող են և՛ չը կատարուել ու խախտուել, բայց իշխանն (իշխանութիւնը) ոչ վայրասպար ամէր է սուսեր ընդ մէջ (Հռոմի։ ԺԳ. 4), նա պատժում է օրինապանցութեան համար։ Պետութիւնը մարդկային գիւտ կարգադրու-

թիւն չէ, այլ աստուածային հաստատութիւն է. (քանզի ոչ  
 տեսեք է իշխանութիւն, եթէ ոչ Պատեօց Նուրմ. Ժ.Գ. 1).  
 Բայց սրանով չէ մերժուում ու ջրուում այն գաղափարն, որ  
 նա՛ պետութիւնն է միւսնոյն ժամանակ և մարդկային հաստա-  
 տութիւն (առ. Պետր. Բ. 13), որովհետեւ այդ աստուածային  
 հաստատութեան պահպանութիւնն ու իրագործումն երկարատե-  
 պատմական դարագման տղզմամբ յանձն է եղած մեղաւոր մարդոց:  
 Պետութիւնը մարդկային հաստատութիւն է էլի այն պատճառով,  
 որ նորա հիմնարկութիւնը աստուածային չէ: Բայց իսրայէլի  
 աստուածպետական պետութիւնից, որ բացառապէս իսրայէլի ազգի  
 համար էր նշանակած — ոչ մի պետութիւն չէ կարող իւր սկզբնա-  
 ւորութիւնը ժամանակի մէջ վերաբերել Աստուծոյ ներգործու-  
 թեան: Առաջին պետութեանց ծաշումն ըստ մեծի մասին անհե-  
 տանում է ժամանակի խաւարի մէջ և ինչ էլ որ կարող ենք իմանալ  
 այդ առարկայի վերաբերմամբ, ցոյց է տալիս մեզ, որ հակառակ  
 քրիստոնէական եկեղեցւոյ, որոյ սկիզբն կատարեալ է և սուրբ —  
 պետութիւնը ծագած են անկատար սկիբներէից: Ամենից աւելի  
 հաւանականն այն գաղափարն է, թէ պետութեան կազմութիւնը  
 ծագումն առած է գերզատանից, նահապետական վիճակից, այն  
 է, որ մի որեւէ անհատ — անձն, որ ունէր ամենամեծ հեղինա-  
 կութիւնը գերբնասանի մէջ, այսինքն նորա գլուխն էր, իւր  
 անձնական յատկութիւններով ու առաւելութիւններով շատերի  
 զարմանքն և հաւատարմութիւնը գրաւեց. ուստի և իւր հեղի-  
 նակութիւնը տարածեց ամբողջ ցեղի, ապա մի քանի ցեղերի  
 վերայ, որոնք ապագայում միանալով կազմեցին մի ազգ: Բայց  
 պատմութիւնն ուսուցանում է մեզ, որ պետութիւնը ծագած են  
 և ոչ մի անձի հեղինակութեամբ, այլ մի քանի գերզատանների  
 գլխաւորների միութեամբ, ազատ անկախ և առաւելութիւնը  
 աւանդող մարդոց միութեամբ, որոնք միմեանց հետ դաշն են կապում  
 փոխադարձ պաշտպանութեան համար. սորա շօշափելի օրինակը  
 կազմում է իսրայէլիայի գաղթականութիւնը միջին դարերում:  
 Բայց սա էլ չէ հաստատում այն գաղափարը թէ պետութիւնը  
 միայն ընկերական գաշնագրութեամբ կազմուում են: Այսպէս երբ

մենք հետազոտում ենք պետութեանց ծագումն, մեր առաջ հանդէս են գալիս թէ միապետական և թէ հանրապետական սկզբունքները: Բայց և այնպէս միապետականը նախնականն է և ամենահինը, իսկ հանրապետականը— անսկզպական է և իբրև հակադրուիք առաջինի:

Բայց յայտնանէ պատմութիւնը ցոյց է տալիս մեզ, որ պետութիւնը ոչ միայն անկասար, այլ և յանցաւոր ծագումն ունեցել են: Ս. Գրքից տեսնում ենք, որ առաջին պետութիւնը հիմնուեցաւ յափշտակութեամբ և բռնութեամբ (ճննդ. ժ. 8—10): Ներքուիթ առաջին միապետն էր երկրիս երեսին (նա սխառ լինել սկայ ի վերայ երկրի): Նա հզօր սրտորդ էր և նորա իշխանութեան սկիզբն Բաբելոնումն եղաւ: Ներքուիթ իսօքը նշանակում է «ապստամբութիւն անենք» (այն է ապստամբութիւն Տիրոջ դէմ, հիմնելով սեպհական թագաւորութիւն) և հաւանական է, որ այս անունը նրան տուին նորա, որ զղուած էին նորա բռնութիւններից: Արք նա կոչուում է հզօր սրտորդ, յայտնի բան է այս իսօքը պէտք է նախ և առաջ հասկացուի իսկական մարտի, բայց կարելի է ինչպէս շերդէրն առաջին անգամ ասաց, փոխաբերական մտքով ևս հասկանալ սրտորդ իսօքն, այն է սրտորդ մարզկան՝ որ թէ խորամանկութեամբ և թէ բռնութեամբ մարդոց իւր ձեռքը գցեց, և ստրկացրեց: Միջին դարերի աստուածաբանների մեծամասնութեան կարծիքն ու հայեաղքն էր, որ պետութեանց ծագումն բացառապէս վերաբերելի է բուռն և զօրեղ անձանց, աշխարհակալների, «ապրստամբների», որոնք բռնաւորներ գարձան. ներկայ ժամանակումն էլ շատ պապականներ նոյն հայեաղքն ունին և սրանից եզրակացնում են, որ սրտոր միշտ պէտք է հանդէս գայ իբրև ազգերի պաշտպան բռնաւորների դէմ, որոնք բուռն այժն ուղղւում են իրաւունքի տեղ դնել: Բայց ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս աշխարհակալութիւնն ու բռնութիւնը պետութեանց հիմնարկութեան միակ ճանապարհն ու միջոցները չեն, թէև շատ պետական կառավարութեանց բնորոշ յատկութիւնքը Ներքուիթականք են՝ այն է յեղափոխութիւնն և բռնութիւնն:

Թէև պետութեան չէ կարելի անմիջապէս աստուածային ծագումն

վերաբերելի բայց և այնպէս նա իւր ներքին էութեամբ աստուածային հաստատութիւն է: Նա հիմնուած է ներքին անհրաժեշտութեան վերայ, գաղափարի վերայ, որ ոչ մի իշխանութիւն չէր կարող ունենալ մարդկային կամքի վերայ, եթէ նորա մէջ չը ճանաչուէր չըխոստովանուէր աստուածային որոշումն — սա ճշմարտութիւն է, որ աւելի կամ պակաս ճանաչում ու խոստովանում էին և հեթանոսք, որովհետև սոցա մէջ էլ հնազանգութիւնը պետութեան օրինաց անխղիչի կերպով կապուած էր հաւատոյ հետ առ հովանաւոր և գառաւոր աստուածները: Բայ որում պետութիւնն աստուածային հաստատութիւն է, ուստի և նորա ծագումն ու գոյութիւնն էլ, չընայելով մարդոց յանցաւորութեան, հիմնուած են աստուածային որոշման վերայ: Արովհետև որպէս զի պետութիւնը կարող լինի կազմակերպուել ու որոշ ժամանակամիջոցում գոյութիւն ունենալ — սորա համար կարևոր են շատ բազմաատեսակ միաբանութեամբ գործող ոյժեր և հանգամանքներ, որոնք միայն մարդկային կամքից կախուած չեն:

Պետութիւնն իբրև աստուածային հաստատութիւն երկրիս վերայ, ամենից առաջ մասնացոյց է լինում մեղքի, կամեցականութեան, բռնութեանց և եղեռնագործութեանց վերայ, որոց գէժ նա կամենում է պատ ու պատնէշ կանգնել: Ծննդոց գրքում կարդում ենք, որ երբ Տէր Աստուած ջրհեղեղից յետ դաշն կուեց Նոյի հետ, ի միջի այլոց Նա տուեց հետևեալ պատուիրանը. «Որ հեղու զարիւն մարդոց, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորագի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն (Ծննդ. Թ. 6): Մեզ յայտնի այս ամենահին իրաւաբանական որոշման մէջ, որ իբրև աստուածային պատուիրան արտայայտած է, մենք գտնում ենք պետութեան տարրը նահապետական վիճակի մէջ: Յայտնի բան է, այս որոշումն ընդհանրապէս միայն այն միտքն է յայտնում, որ «մարդ» պէտք է պատժէ մարդասպանին, բայց որովհետև այստեղ խօսքը սպանածի ազգականաց մասնաւոր վրէժխնդրութեան վերայ չէ, ուստի և պարզապէս վերաբերելի է այն բարձրագոյն իշխանութեան, իբրև այնպիսի մի գործարանի, սրոյ միջնորդութեամբ պէտք է պահպանուի ու պաշտպանուի արդարութիւնը: Ջրհեղեղից

յետ իսկոյն Աստուած Տասաստեց բնութեան կարգը ցանքի ու հնձի՝ զրաի ու շորի՝ օրուայ և գիշերուայ վերաբերմամբ և այսպէս յայտնեց իւր խոստումն թէ բնութեան կարգը կը պահպանուի քանի որ կայ երկիրս, քանի որ ներկայ տիեզերական գասակարգութեան շրջանաւարտութիւնը շարունակուում է: Միևնոյն ժամանակ Աստուած սրտում է և իրաւաբանական կարգը մարդկային սեռի պահպանութեան համար: Նախնի տոտուածաբաններն իրաւամբ Աստուածաշնչի այս հաստատմի մէջ տեսնում էին եթէ ոչ պետութեան գէթ բարձրագոյն իշխանութեան հաստատութիւնը: Արտիշեաւ եթէ Աստուած տուեց մարդուն իշխանութիւն կեանքի ու մահուան վերայ, անտարակոյս Նա տուեց իշխանութիւն և աւելի պակաս կշիռ ունեցող աւարկաների վերայ և Նորա կամքն այն է, որ մտրդկային գործերն ենթարկուին յայտնի անձանց իշխանութեան, որոնք իրաւունք պիտի ունենան յանցաւորներին պատժելու: Բարձրագոյն իշխանութեան այս պարտաւորութիւնը շատ նշանաւոր և ծանրակշիռ է և նորա վերայ հարկ է առանձնապէս պնդել մանաւանդ ներկայումս, երբ թաւամեալ և կրօնին օտար մարդասիրութիւնն չափազանց հակամէտ է նրան չը ճանաչելու և զանցաւորութեան տալու, որովհետև ներկայումս արտայայտուում է պահանջ, որ պետութիւնը անձանց հաճոյքը կատարէ և հոգայ նոցա երջանկութեան վերայ, ուստի և անպատէ նրանց սմեն փոքր ի շատէ սեղմող, զսպող կապերից: Բայց մենք չենք կարող բարձրագոյն իշխանութեան միայն պատժող գործողութեանց վերայ կանգ առնել, որովհետև պետութիւնն աւելի ընդարձակ նշանակութիւն և կոչումն ունի, քան յանցաւոր գործողութեանց սահման դնելը, գործողութեանց, որոնք անտարակոյս անհնարաւոր կանէին ընկերական — հասարակական կեանքն, եթէ նորա զիմադրութիւն չը գտնէին բանականութեան ոչ միայն մտաւոր ուժի կողմից, այլ և նոյն իսկ ֆիզիքական ուժով զինաւորուած բանականութեան կողմից: Բայց պետութեան նշանակութիւնն ու պարտքը չեն սահմանափակուում միայն յանցանքների առաջն առնելով ու նրանց պատժելով, այլ նորա պարտականութիւնն է և կարկազրող ու կանոնաւորող արդարութիւնն:

որ ամեն եղանակով ընկերական հասարակութեան ամեն յարաբերութեանց մէջ պէտք է իրականացնէ «*Suum cuique*»-ի (իւրաքանչիւր ումեր զիւրն) գաղափարը: Պետութիւնը բախանգակուած է իւր մէջ ազգի ամբողջ կեանքը, սորա բոլոր ձգտումներով ու նպատակներով, սրանց հիմն է Աստուծոյ մարդու համար որոշած նշանակութիւնն, ուրեմն պետութեան հոգածութեան առարկայ են ձեռագործութիւնն, արհեստը, գիտութիւնն և մինչև անգամ եկեղեցին, պետութիւնն իրաւանց տաճանի մէջ ոչ միայն հովանաւորուած է այս բոլոր կենսական պայմաններին, սոցա յարաբերութեանց մէջ միմեանց հետ, այլ և իմաստութեամբ հոգում է վերայիշեալ բազմազան պայմանների վերայ և նպատակում է նոցա զարգացման, որքան կարելի է հասանել այս նպատակին արտաքին հաստատութեանց միջնորդութեամբ: Յայտնի բան է ներկայ միակողմանի—անհասական տեսութիւնը, որ ընդ նմին զարկ է կրօնական հիմքից, պետութեան պարտականութիւնն ու խնդիրը սահմանափակուած է նրանով, որ նա ապահովէ անհասանքի սեպհականութիւնն ու անձնական ազատութիւնն, նոյնպէս և նոցա փոխադարձ յարաբերութիւնքը, բայց այդ տեսութիւնը այս գէպքում մատնացոյց է լինում միայն այն ևս թերի կերպով, այն պարագայի վերայ, որ բարեկարգ հասարակական կեանքի մէջ ամենանհրաժեշտն է: Բարբառին իրաւացի է, որ սեպհականութիւնն և անձնական ազատութիւնն անբաժանելի են միմեանցից, իբրև ընկերականութեան առաջին սարրներ: Անշուշտ առանց սեպհականութեան չէ լինում անձնական ազատութիւն: Բայց որովհետև առանձին անձնաւորութիւնը չէ կազմում միայն նպատակինքն իւր համար և է անգամ մեծ ամբողջի էլ, ուստի և սեպհականութեան վերայ էլ չը պէտք է նայել իբրև լոկ մատնաւոր սեպհականութեան վերայ, մինչև անգամ մատնաւոր սեպհականութիւնն ունի իւր ընկերական-հասարակական կողմն, որով ապէտք է նորա վերայ նայել իբրև մի առարկայի վերայ, որ պատկանելիս լինէր ամբողջ հասարակութեան սեպհականութեանը: Չորորինակ այս արտայայտուում է պատերազմի ժամանակ, երբ մի երկիր պաշտպանուում է թշնամու զէմ և երբ պաշտպանում են

ոչ թէ այս կամ այն անհատական կալուածներն, այլ բոլոր երկիրն, որ պատկանում է ազգին, որ այն իւր նախնիքներից ժառանգել է: Իրաւունքի գաղափարն միայն այն ժամանակ հասնում է իւր կատարելութեան, երբ պետութիւնը չէ բաւականանում իւր վերայ առնելով անհատների իրաւանց հոխմաստրումն, այլ հոգում է և հասարակութեան իրաւանց վերայ, հասարակական խնդիրների վերայ, ուրեմն ուշք է դարձնում նոցա հետ կապուած պարագաների ու հաստատութեանց վերայ և ընդ նմին նա՛ պետութիւնը ոչ միայն նրանց պաշտպանում է, այլ և նպաստում է և օգնում նոցա զարգացման և հէնց սրանով նա երևում է իբրև արգարութիւն, որ պաշտպանողն է ամբողջ հասարակութեան: Անտարակոյս պետութիւնն ինքը չը պէտք է իրագործէ այդ խնդիրներն ու նպատակները—այլապէս նա իւր սահմաններն անցած կը լինէր. զորօրինակ նա չը պէտք է խառնուի արհեստի կամ գիտութեան և կամ եկեղեցւոյ ներքին յարաբերութեանց մէջ, բայց պէտք է թող սայ, որ այդ առանձին ուժերը հետեւեն իրանց սեպհական բնութեան և օրէնքներին, բայց նա պէտք է մատակարարէ բոլոր արտաքին պայմաններն, որպէս զի այդ ոյժերն իրանց կողմից կարողանան հասնել իրանց պարզացման և միւս կողմից—միասին իրագործեն ամբողջ խնդիրը—գործը: Այս խնդիրն ընդհանուր մարդկութեան գործողութեան բազմակողմանի արտայայտութիւնն է, իւրաքանչիւր ազգի անհատականութեան կերպարանքի ներքոյ:

Պետութիւնն, իբրև արտաքին արգարութեան ստպարէզ երկրիս վերայ, ունի բարոյական և ֆիզիքական կողմեր: Նորա ֆիզիքական կողմն է իշխանութիւնը: Պետութիւնն առանց իշխանութեան անմիտ անբովանդակ բան է և ի վաղուց հետէ պետութիւնք ձգտած են իրանց իշխանութիւնն ընդարձակելու: Բայց պետութիւնն իւր գաղափարին մերձեցնում է միայն այն ջախով, ինչ չափով որ նորա իշխանութեան գործադրութեան արտայայտիչք լինում են իրաւունքն ու արգարութիւնն և հէնց սորա վերայ է հիմնուում պետութեան մէջ իսկական հեղինակութիւնը: Այս է պետութեան բարոյական կողմը, որովհետև արտաքին արգարութիւնն էլ բարո-

յական սկզբունքի արտայայտիչն է: Արտաքին արդարութեան հիմքը ներքինի մէջ է և արտաքին գործադրութիւնը զուրկ են լինում սգեւորիչ սկզբունքից, եթէ նաքա չեն ծագում հոգւոյ ներքին տրամադրութիւնից: Կառավարութեան և հպատակների մէջ բոլոր յարաբերութիւնը պէտք է հիմնուած լինեն փոխադարձ վստահութեան և հաւատարմութեան վերայ, ստիպողական օրէնքներն, որոնք հակասում են մեծամասնութեան տիրապետող տրամադրութեան, արմատ չեն գցում: Առանց բարոյական հիման, որոյ վերջին նեղուկը կրօնն է, իշխանութիւնն անշուշտ չարագործութեան առարկայ կը դառնայ և կընկնի անմարտը ձեռքերի մէջ:

### Ն Ջ Գ Ա Յ Ի Ն Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պետութեան գազախորի հետ կապուած են ազգի և երկրի գազախորները, նա միացած ազգի և երկրի հետ կազմում է թագաւորութիւն, այս խօսքի քաղաքական նշանակութեամբ: Ազգը բնութիւնից որոշուած անհատական հասարակական գործարան է, հասարակական մարմին, որ իբրև առանձին անդամ ինքն էլ պատկանում է ընդհանուր մարդկային սեռին և ներկայացնում է ամբողջ մարդկութիւնը փոքր գիրքով: Ազգային կեանք, այս խօսքի բուն ամփոփ մտքով, չէ կարող գոյութիւն ունենալ, երբ ազգը թափառում է, ինչպէս զորօրինակ ազգերի տեղափոխութեան ժամանակաշրջանում կամ երբ Խորայէլը թափառում էր անապատում, այլ ազգային կեանք լինում է միայն մի երկրում, ուր ազգը հաստատուն բնակութիւն ունի, մի երկրում, որ որոշ սահմաններ ունի, որոց մէջ ազգն ունի իւր սրբատեղիք (սեղանք) և ընտանի օձախ: Այսպիսի ազգի և երկրի մէջ կայ և զարգանում է ժամանակի ընթացքում փոխադարձ յարաբերութիւն և կապ, սանորանումն է, որ երկիրը մշակութեամբ շատ վերաբերմամբ տասնում է ազգային առանձնայատկութեանց կնիքն և փոխադարձաբար—ազգային յատկութիւնը և ազգային զարգացումն ենթարկուում են բնական հանգամանաց ազդեցութեան, որոնք առանձնապէս արտափայլում են

ազգային առատութիւնսուն զրոյցների և ազգային բանաստեղծութեան մէջ, սորա շարժառիթների ու ձևերի մէջ: Ազգային առանձնայտուութիւնը անմիջապէս երևում են ոչ միայն գէմքի գծագրութեան մէջ (ինչպէս զորօրինակ հրէաների մէջ), այլ աւելի ևս լեզուի, բարբառի մէջ: Աւր միայն մենք հանդիպում ենք օտար լեզուով խօսող մարդոց, այդ կը նշանակէ հանդիպում ենք օտար ազգերի:

Ազգայնութիւնն, ինչպէս որ բնական հիմն է պետութեան, նոյնպէս և ամեն մարդկային, ամեն մտաւոր ու բարոյական դարգացման անհրաժեշտ պայմանն է: Մտրդս առհասարակ իւր նշանակութեան համար զարգանալ կարող է միայն հասարակութեան մէջ. բայց միայն նոքա, որոնք միևնոյն ազգայնութեան անդամք են, կարող են անմիջապէս միմեանց հետ հաղորդութիւն ունենալ, կարող են միմեանց հասկանալ ոչ միայն իրանց շահերի ու կարիքների ընդհանուր լինելու պատճառով, այլ աւելի իրանց լեզուի ընդհանրութեան առթիւ — ազգային լեզուի, որ փոխադարձ հաղորդութեան և միմեանց թէ ժամանակաւոր մանր և թէ բարձր հոգևոր հանգամանաց մէջ հասկանալու համար անհրաժեշտ պայման է: Միայն խօսքի միջնորդութեամբ մարդոց մէջ կարող են տեղի ունենալ փոխադարձ յարաբերութիւնք. միայն խօսքի միջնորդութեամբ հոգին կարող է հաղորդութիւն ունենալ հոգւոյ հետ. մինչև անգամ շոգին Սուրբ իւրաքանչիւր ազգի հետ պէտք է տորա սեպհական լեզուով խօսի, որպէս զի հաղորդութիւնն Աստուծոյ և մարդոց մէջ կայանայ — այս մտտին վկայ է Պենտեկոստէի օրն, երբ իւրաքանչիւր ազգ լսում էր ասենաբանութիւն իւր սեպհական լեզուով: Աւտի և ազգայնութիւնն ազգի իւրաքանչիւր անհատի համար անհրաժեշտ բարիք է և պէտք է պահպանուի, պաշտպանուի ու զարգանայ:

Բայց որքան էլ մեծ է նշանակութիւնն, որ տալիս ենք ազգայնութեան, այնուամենայնիւ իւրաքանչիւր առանձին ազգ չէ կարող միայն ինքն իրմով բաւականանալ, նա կարող է իւր կոչման համար զարգանալ միայն և եթ այլ ազգերի փոխադարձ գործակցութեամբ ու ազգեցութեամբ: Անշուշտ ազգերը սկզբում թշնամաբար են վերաբերում միմեանց, ազգային ինքնասիրութիւն, հպարտութիւն

և սնախառութիւն, ազգային ատելութիւնն ու ազգային պատե-  
 րազմները շատ հին երեւոյթներ են ընդհանուր պատմութեան մէջ,  
 բայց և այնպէս միեւնոյն ժամանակ ազգերն ունին աւ միմեանս  
 անկիմադրելի ձգողական ոյժ: Այ միայն մարմնաւոր այնպէս  
 անուանեալ նիւթական պիտոյքներն ու այն, ինչ որ մարդու ար-  
 տաքին գոյութիւնն աղնուացնում ու յարգարում է, ազգերին աւելի  
 և աւելի կոխեալ են անում միմեանցից և նրանց փոխազարձ  
 յարաբերութեան մէջ են գնում քաղաքակրթութեան և լուսուո-  
 րութեան յաստջազխմութեան (երաբերմամբ) այլ նրանց միմեանց  
 հետ համերաշխ են անում և բարձր վսեմ շահերն՝ այն է արհեստը,  
 գիտութիւնը, կրօնն ու եկեղեցին: Աւճառականութիւնն և ճո-  
 ւղաչնայութիւնը, տալաքութիւնը, բնական—գիտնական գիտերն,  
 որոյ շնորհիւ ունեցանք երկաթուղիք, շագնաւեր ու հեռագիր,  
 շատ և շատ նպատակցին ճշգրտայն յարաբերութեանց հաստա-  
 տուերուն, թէ բնական և թէ մտաւորական (երաբերմամբ): Նորա-  
 բողոքեան նպատակցին այն համաշխարհական քաղաքացիութեան  
 գազախարի տարածման ու հաստատութեան, որ բոլոր երկրիս ու  
 մարդկութեան մէջ արմատ գցեց և որ իւր կողմից այն ազգեցու-  
 թիւնն ունեցաւ, որ դանազան ազգեր ուսանում են օտար լեզու-  
 ներ և սրանով ստանում են ընդունակութիւն սեւոյճականելու  
 օտարների աւանձնայտակութիւնք. բացի սրանից նա՛ համաշխար-  
 հային քաղաքացիութեան գաղափարը հարթում է ճշգրտայն երա-  
 տասնական յարաբերութեանց ճանապարհը: Անշուշտ աշխարհաքա-  
 ղաքացիութեան գաղափարն, որ զօրացող միջազգային հաղոր-  
 դակցութեանց հեռեանք ու պտուղ է, չը պէտք է ոչնչացնէ կամ  
 թմրեցնէ սէրն առ հայրենիք, այլ պէտք է միայն նրան իւր պատ-  
 շաճաւոր սահմանները ցոյց տայ: Անշուշտ իւրաքանչիւր աւանձին  
 ազգ պէտք է կատարէ ինքնագոյութեան և ինքնահարստութեան  
 պարտականութիւնը, պէտք է պահպանէ և պաշտպանէ Աստուծո՛վ  
 իրան շնորհուած աւանձնայտակութիւնը. նա երբէք տրկաբար  
 անձնատուր չը պիտի լինի օտար ազգերին: Բայց միեւնոյն ժամա-  
 նակ պէտք է ճանաչէ և խոստովանի, որ միայն այդ երանակով  
 նա չէ կարող կառարել իւր բոլոր կոշումն՝ իբրև ազգ: Ան այս

նա ընդունակ է լինում միայն այն ժամանակ, երբ գիտակցաբար պատմութեան ընդհանուր խնդիրներին անձնատուր լինելով, մարդկային սեռի մեծ և ընդհանուր նպատակներին ծառայելով հանգերձ, կը ճանայէ իրան ազգերի մեծ գերգատտանի աւանձին անդամ: Վատմութեան խնդիրը—գործը այս կամ այն աւանձին ազգին չէ պատկանում: այլ ամբողջ մարդկութեան միացեալ հասարակաց խնդիր է և կարող է իրագործուել միայն այն ամեն ազգերի միացեալ գործակցութեամբ, որոնք առհասարակ ընդունակ են մասնակցելու պատմական շարժողութեան, այսինքն կոչուած են ներգործական պետական զարգացման համար: Խրտքանցիւր ազգ—մինչև անգամ ի բնէ աւելի ձիրքերով օժտուած—ունի իւր որոշ սահմանաւորութիւնն ու որոշ թերութիւնը: Աւտոի և ազգերն իրանց թէ մտաւոր և թէ ֆիզիքական ձիրքերով շիշտ միմեանց հետ յարաբերութեան մէջ պիտի լինին միմեանց քաջներու համար: Այն ազգն, որ ոչինչ չէ կամենում սուսներ, ոչինչ չէ կամենում ուրիշներից ընդունել, այլ իւր մեծամտութեամբ ու ինքնաբաւակամութեամբ միայն ինքն իւր հետ կամենում է յարաբերութիւն ունենալ, իւր մէջ փակուած մտալ, այգպիսի ազգը ժամանակի ընթացքում աւելի և աւելի հեռանում է համամարդկային սկզբունքից: Երբեմն ազգայնութեան մոլեռանդ պաշտպաններից լսելի են հեռեեալ խօսքերը՝ թէ ազգը չը պէտք է օտար ազգերի ազգեցութեան ենթարկուի, որպէս զի իւր ինքնուրոյնութիւնը չը կորցնէ: Այդ գաղափարին կարելի է պատասխանել այսպէս. ունի արդեօք արժանաւորութիւն և կշիռ այն ինքնուրոյնութիւնն, որ երկնչում է իրան կորցնելու, սերանալու, օտար ինքնուրոյնութիւնների հետ շփուելով: Եւ թէ իսկական ճշմարիտ ինքնուրոյնութիւնը ձեռք չէ բերուում արդեօք, հէնց փոխադարձ ներգործութեամբ ու ազգեցութեամբ: Արտհետև եթէ որևէ ազգ ուրիշ ազգերի վերաբերմամբ միայն ընդունող ու փոխ առնող է և ոչինչ ուրիշներին հաղորդել, ապա չէ կարող, այգպիսի երևայթը մեզ համար բոլորովին անբնական համարելի է:

Վերևը մենք ասացինք, որ ազգայնութիւնը պետութեան հիմն է: Այստեղից ըստ երևութին կարելի է եզրակացնել, որ ազգ և

պետութիւն, ազգային և քաղաքական սկզբունքներն իրար քաջ-  
նում են, միմեանցից անբաժան են: Բայց այսպիսի եղբակացու-  
թիւնը չէ հաստատուում չէ արգարանում իրականութեամբ և  
պատմութեամբ, այլ նա պէտք է սահմանափակուի և բարձր հայե-  
ցակէտից: Կրականապէս մենք տեսնում ենք յաճախ միեւնոյն պե-  
տութեան մէջ զանազան ազգութիւններ, իսկ միւս կողմից զանա-  
զան պետութիւնք միեւնոյն ազգայնութեամբ: Կրերի այսպիսի յի-  
ճակի վերայ կարելի է նայել, իբրև մի անբնական իրողութեան  
վերայ, կարելի է ջանալ բաժանելու միմեանցից սարբեր տարրերն  
և միացնելու միատեսակները: Բայց և այնպէս այն վիճակը բոլո-  
րովին վերցնել, ջնջել անկարելի է և այս հէնց այն պատճառով  
էլ որ իւրաքանչիւր առանձին ազգի վերայ հարկ է նայել ոչ թէ  
միայն իբրև մի նպատակի վերայ իւր համար, այլ և իբրև մեծ  
ամբողջի՝ այսինքն ազգերի ամբողջ գերդաստանի անգամի վերայ  
էլ: Պետական կեանքն ու յարաբերութիւնք հիմնուած չեն միայն  
ազգայնութեան վերայ. նոքա պայմանաւորուում են նայնպէս և  
իշխանութեան յարաբերութիւններով և զանազան շահերի հա-  
շիւներով ու պայմաններով: Առանձին ազգն՝ ամբողջ մարդկու-  
թեան հետ շարժում է և մասնակցում է ընդհանուր պատմու-  
թեան գործունէութեան մէջ, որ անտարակոյս միշտ արգարու-  
թեան հանդէս չէ և յաճախ պահանջում է ազգային զոհեր:  
Քաղաքական խառնաշփոթութեանց ու խճճմանց պատճառով շատ  
պետութեանց մէջ գտանուում են զանազան ազգութիւնք: Եւ  
այսպիսի խառնուածքի վերայ չը պէտք է միշտ բացառապէս իբրև  
մի չարիքի վերայ նայել, իբրև մի օրհասական անհրաժեշտութեան  
վերայ: Կան և աշխարհներ, որոնք կազմում են բնական անցք մի  
երկրից դէպի միւսը—աշխարհներ, ուր զանազան ազգութիւնք  
հանգիստում են միմեանց և միանում միմեանց հետ թէ բարուց  
և թէ լեզուի վերաբերմամբ: Եւ թէպէտ մի պետութեան մէջ  
միացած ազգայնութեանց տարբերութիւնն կարող է առիթ տալ  
զանազան ընդհարմանց և կռուի որ գուցէ և բաժանման ու  
անջատման տեղիք տալ կարողանայ. բայց և այսպիսի ազգայնու-  
թիւնք անգամ կարող են նպատուել միմեանց զարգացման և զօրա-

նալուն, եթէ նորա յընթացս իրանց երկարատե միացեալ պատմութեան, ընդհանուր փորձութիւններով, ընդհանուր ուրախութեամբ և վշտերով աւելի և աւելի սերտութեամբ կապուում են միմեանց հետ: Այսպէս յայտնւում նորա կարող են իւրաքանչիւրն առանձնապէս ներկայացնել ամբողջի տնտեսութեան մէջ *Տրլապայնո-լեան* գաղափարն և այսպէս նպաստել մարդասիրութեան ընդհանուր զարգացման, իբրև հակապատկեր միակողմանի ինքն իւր մէջ փակուած ազգային ուղղութեան: Այնքան ներկայումս կըլու ստացել է միակողմանի քաղաքականութիւնն, որ կամենում է առանձին պետութեանց սահմաններն որոշել բացառապէս միայն ազգայնութիւններով, դորա բացատրութիւնը որոնելու է անցեալ ժամանակի բնաւորութեան մէջ, երբ անտարբերութեամբ վերաբերուում էին գէպի ազգայնութիւնն և երբ քաղաքական իշխանաւորներն ազգերին ներկայացնում էին իրանց իբրև միայն զանազան բազմութիւնք, որոնց վերայ կարելի էր նայել իբրև քառակուսի մըն կազմող տարածութեան, որոշ հարկատու կամ պատերազմական ոյժեր ունեցող առարկաների վերայ և որոնցից բոտ այսմ հեշտութեամբ կարելի էր ճակատակցարմարութեան համեմատ» բաժանմամբ կամ միաւորութեամբ ձուլել նոր պետական շեղջաղօտ կամ զանգուած: Բացի որանից ազգային միակողմանի քաղաքականութիւնը իւր բացառութիւնը գանում է Նապոլէոն Առաջինի վարմունքի մէջ, ազգայնութեանց վերաբերմամբ, նա կամենում էր *Տրլապայն* (Վրանտիական ազգը) անել քաղաքակրթութեան գաղափար—ներկայացուցիչ այլ ազգայնութեանց համար, որոնց առանձնայատկութիւնքն արհամարհում էր, վիրաւորում և տեսակոխանում և այսպէս խռովեց ու ղինաւորեց իւր գէմ ազգերի օգին և հանգէս բերեց ազգայնութեանց հակադարձութիւնը—զխմագրութիւնը: Գերմանիայի ազատամբութիւնն և նորա պատերազմն ազատութեան համար—այն ժամանակ երբ Ֆրիտէն ու Շլէյերմաններն իրանց սնանուանալի տեսնաբանութիւնքն էին անում—պետութեանց քաղաքականութեան մէջ մոցրին ազգային կեանքն իբրև մի էական գործիչ—գործիչ, որ մեծ կայսրն (Նապոլէոն Ա.) բնաւ ուշադրութիւն չէր աւել: Սորա բնական հետեանքն այն

եղաւ: որ հանդէս եկան մարդիկ որոնց համար այս շարժումն (ազգայնութիւն) նոր միակողմանիութեան շարժառիթ և հիմն դարձաւ: Եթէ մինչև այն ժամանակ ազգայնութիւնը քաղաքագիտութեան մէջ ունէր համարուում այժմն նա ամեն ինչ պէտք է լինէր: Բայց այսպիսի քաղաքականութիւնն, որ ուշադրութիւն է դարձնում միայն ազգայնութեան գործչի վերայ և նրան ամենից բարձր է գտնում, չէ կարող մինչև ծայրը հասնել, չը սահմանափակուել, որովհետև հաշուի առնելու է և այլ բազմութիւ գործիչներ, որոնք սահմանափակում են և կերպարանափոխում են ազգայնութեան կշիռն ու ձգտումն: Զորքրինակ մի ազգ կարող է այնքան փոքրութիւ լինել, որ նորա պէն, իբրև պետական գործութիւն, բնաւ չէ կարող սրահպանուել պետութեանց ամբողջ շարքի մէջ, եթէ նա չի միանալ մի այլ ազգութեան անդամներին հետ: Այստեղ իւր կշիռն ու նշանակութիւնը ստանում է այն կանոնն, որ այժի առաջ ունի քառակուսի միջնը, մարդոց թիւն, որատեսրազմական պէն և այլն:

Եթէ մենք այժմ հարցնենք, թէ քրիստոնէութիւնն ինչպէս է վերաբերուում դէպի ազգայնութիւնն, ամենից առաջ այդ վերաբերութիւնը հակադրական է. առաջին հայեցողածքով մինչև անգամ կարող է թուել, թէ քրիստոնէութիւնը դէպի ազգային զգացմունքներն և դէպի ազգայնութեան արտայայտութիւնը վերաբերուում է միայն բացասական և հակակրական կերպով: Արգարև քրիստոնէութիւնը հակառակ ազգային սկզբունքների առանձին ուժով մտանայոց է լինում ընդհանուր մարդկային սկզբունքի վերայ, ջնջում է ազգային սահմաններն ու խոչնդոտները, ոչնչացնում է տարբերութիւնը, բաժանումն Հրէայի և Սամարացու մէջ, Հրէաների և հեթանոսների մէջ, Յոյների և բարբառոսների մէջ, ամենուրեք որոնում է ներքին մարդուն, որ կոչուած է անմահութեան, արքայութեան համար, որ այս աշխարհից չէ: Քրիստոսի առաջին խոստովանողներն՝ Առաքեալք թողին ամեն ինչ, հեռացան իրանց հայրենիքից և ազգից, որպէս զի բոլոր աշխարհում տարածեն Քրիստոսի արքայութիւնն և ապրում էին ինչպէս երկրաւոր հայրենիք չունեցող մարդիկ: Ինչ որ Քրիստոս գուշակեց

Երուսաղէմի մատին կատարուեցաւ: Նորա պէտք է տեսնէին ինչպէս կորստեան մատնուեցան նոցա սեպհական հայրենիքն ու ազգն, ինչպէս կործանուեցաւ Հրէից ամբողջ պետութիւնը. նորա ամենուրեք եկաւոր և օտարական պէտք է լինէին և իրանց հայրենիք և քաղաքացիութեան իրաւունքը միայն երկնքում ունենային (Թէև Պօղոս առաքեալը մի դէպքում, անպատուութիւնից ազատուելու համար, պնդեց և յենուեցաւ իւր Հռովեական քաղաքացիութեան իրաւունքի վերայ. Գործ. ԻԲ. 25): Բայց այգպիտի ազգայնութեան օտար դիրքը, վիճակն, որոյ մէջ մարգս ապրում է, իբրև երկնքի քաղաքացի, առանց երկրաւոր հայրենիքի, առանց ծննդավայրի երկրիս վերայ, բնաւ մշտապէս որոշուած վիճակ չէ: Աստուծոյ արքայութիւնը պէտք է խմորը լինի, որ պիտի թափանցէ ամբողջ երկրաւոր կեանքը: Քրիստոս հրամայում է իւր աշակերտներին աւետարանով լուսաւորել բոլոր ազգերին և սրանց իւր աշակերտներ դարձնել (Մատթ. ԻԲ. 20): Նա բոլոր ազգերին կամենում է ժողովել իւր առաջ դատելու համար (Մատթ. ԻԵ. 32): Առաքեալն ասում է «Աստուած արար ի միջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ երեսաց ամենայն երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ (այսինքն որոշեց նոցա համար ժամանակամիջոց, նոցա պատմական զարգացման շրջանը, նոյնպէս որոշ տեղ նոցա բնակութեան համար և կամ իւրաքանչիւր ազգի համար նշանակեց իւր երկիրն, որ նորա հայրենիքն է և որ զաւակները պէտք է անուանեն իրանց հարց երկիր) ինդրել զԱստուած զի թերևս զննիցեն զնա և գտանիցեն (Գործք. ԺԷ. 26—27): Բայց այս խօսքերում բովանդակուում է այն միտքը, թէ ազգայնութիւնը պէտք է նշանակութիւն ունենան և Աստուծոյ արքայութեան անօրէնութեան մէջ: Եթէ մի ազգ դառնում է քրիստոնեայ, այդ կը նշանակէ, որ այդ ազգի մէջ պէտք է խորտակուի հեթանոսութիւնն ազգային եսասիրութեան հետ միասին, որ այդ ազգը պէտք է ղեկավարուի և մաքրուի քրիստոնէական ոգւով, այդ կը նշանակէ, որ ազգը իւր քրիստոնէական հաւատի միջնորդութեամբ պէտք է մասնակցէ Աւետարանի շնորհաց և օրհնութեանց և իւր

վիճակի բոլոր փոփոխութեանց ժամանակ՝ վշտի և ուրախութեան մէջ նրանում միայն պէտք է իւր ապաստանը գտնէ և իւր նեցուկն, այդ կը նշանակէ, որ ազգը քրիստոնէական ոգւոյ արդիւնաւոր և փրկարար ներգործութեամբ պէտք է զարգացնէ իւր ձիրքերն, որ Աստուած նրան պարգևել է, շահ է իւր քանքարներն, որ նրան հաւատացել է, որպէս զի կարողանայ բռնել ամբողջ մարդկութեան մէջ այն տեղն, որ Աստուած նորա համար որոշել է, երբ բոլոր ազգերը Քրիստոսի առաջնորդութեան և իշխանութեան ներքոյ կը միանան ի մի քրիստոնէայ ամբողջութիւն: Աւստի և քրիստոնէութեան վերաբերութիւնն առ ազգայնութիւնն է միևնոյն ժամանակ և՛ մաքրող ու դատաւարակող կամ կատարելագործող:

Իւրաքանչիւր ազգ, որ քրիստոնէութեան դատաւարակիչ ազդեցութեան ենթարկուել է, ունի կոչումն և պարտք ճանաչելու իւր առանձնայատկութիւնքը, թէ ընտիրներն, որոնք Աստուած նրան պարգևել է և որոնք պէտք է զարգացնէ ու կատարելագործէ, և թէ մեղսական առանձնայատկութիւնք, որոնք ջնջուելու են— ճանաչողութիւն, որ հաւատարապէս դժուար է թէ անհատի և թէ ամբողջ ազգի համար: Շատ յաճախ ազգը պատրանաց և ցնորքի մէջ է լինում իւր վերաբերութեամբ. նա երեւակայում է, թէ ինքը կոչուած է մի նպատակի համար, առ որ նա բնաւ չունի կոչումն, թէ ինքն ունի զօրութիւն, որից խոկապէս զուրկ է, մինչդեռ բարձի թողի է առնում իւր իսկական ոյժերի զարգացումն— ցնորք, որոյ հետ սովորաբար կապուած է պատմական դիրքի անհասկացողութիւնն ու անճանաչողութիւնն, որ յատուկ է ազգին: Մանաւանդ նորա, ոյք ազգի առաջնորդ և ուսուցիչ պիտի լինին, պարտական են նպատուել ազգային առանձնութեանց ճանաչողութեան, թէ ընտիր և թէ վատ յատկութեանց: Ամեն ժամանակ սուտ մարգարէներին յատուկ եղած է շողորթել ժողովրդեան և սորա թերութիւնքը լսեմ ցոյց տալ, այն ինչ ճշմարիտ մարգարէք լուրջ կերպով քննադատում էին իրանց ազգի թերութիւնքն. ուստի և շատ յաճախ նորա ժողովրդական չէին լինում իւրեանց ժամանակակիցների աչքում, մինչև անգամ կասաւորացի վիճակին ենթարկուում էին, թէ և ապագայում նոցա

գերեզմանները զարգարուում էին: Այսպէս զորօրինակ Կորայէլի ճշմարիտ մարգարէներն, երբ պետութիւնը փառագի անդնդի եզրին գտանուում էր, ժամանակակից պետութեանց վիճակի մասին իրանց շնորհուած պարզատեսութեամբ և ճանաչողութեամբ, լուրջ կերպով նախազգուշացնում էին իսանց ազգը իզուր պատերազմ չը մղելուց չափազանց զօրեղ թշնամու գէտ: յիշեցնում էին նրան, որ խոնարհի Աստուծոյ առաջ և հնազանդի հորա պատուէրներին, Ար ժամանակաւորապէս տուել է իշխանութիւնը հեթանոս թագաւորներին, բայց սոցա օրն ու ժամն էլ կը հասնի, նոքա քարոզում էին «յորժամ դարձցիս և յոգոց հանիցես յայնժամ կեցցես» (Եսայի. 1. 15) (այսինքն եթէ դարձի կը գար, ու կը հնազանդիք, կը փրկուիք): Բայց ամբօրն աւելի յօժարութեամբ լսում էր սուս մարգարէներին, որոնք շարքորթում ու շոյշոյում էին նորա ազգային հարստութիւնն, ամբացնում էին նորա սնախառութիւնն և ինքնուրոյնութեան ետական զգացմանքն, ազգում էին նրան յաղթութեան սնտի յոյսեր, յորգորում էին նրան գէտի յանդուզն ձեռնարկութիւնք և խաբուսիկ դաշնապրութիւնք:

Ազգայնութիւնք միայն բրիտաննէութեամբ կարող են զարգանալ իրանց իսկական կոչման համար: Առանց բրիտաննէութեան ազգայնութեան գաղափարն, որոյ մասին ներկայումս յաճախ խորհրդածում են և մինչև անգամ աստուածացնում են նրան, անյուսալի և երկդիմի գաղափար է, որ ինքն ըստ ինքեան բուսական չէ բնաւ պետական զարգացման համար և առհասարակ ամեն տեսակի զարգացման համար: Ազգայնութեան գաղափարի երկդիմութիւնն նորանումն է, որ նա միեւնոյն ժամանակ և Աստուծոյ շնորհած սկզբունք է, որ պէտք է պահպանուի ու պաշտպանուի և զուս մարդկային, մինչև անգամ հակ-աստուածային սկզբունք է, որ պէտք է ջնջուի: Այս երկդիմութիւնը յայտ կը գայ և կը պարզուի նամանաւանդ երբ մենք դառնանք գէտի ազգայնութեանց ծագումն: Մենք արգարև հակամիտ ենք կարծելու, որ ի սկզբանէ ըստ Աստուծոյ ծրագրի և որոշման ազգային առանձնութիւնք, իրանց հիմն մարդկային սեռի միակութեան մէջ ունէին և գործարանաւորապէս պէտք է զարգանային այդ միութիւնից:

Բայց սրբազան աւանդութիւնն, որ նկարագրած է Մովսէսի առաջին գրքում (Մննդ. ԺԱ) պատմում է մեզ, որ ազգերը բնաւ գործարանաւորապէս չեն ծագել մարդկային սեռի միութիւնից, այլ բունն զրմամբ: Այնտեղ պատմած է հեռեւեալը՝ սկզբում երկրիս վերայ մի լեզու էր և մի բառքաւ, ուստի և կարելի է ենթադրել և մի ճանաչողութիւն Աստուծոյ, ըստ որում, միայն Աստուծոյ միւլենայն ճանաչողութիւնը, մի Աստուծոյ խոստովանութիւնը միայն կարող էր ամենքին միացած պահել, իբրև, միութիւն: Այլ թէ նոցա այն յարաբերութեան մէջ առ Մի Աստուած փոփոխութիւն առաջացաւ, այս պարզապէս երևում է հնագոյն պատմութեան մէջ: Այն է, գրութեան մէջ առած է, թէ մարդիկ մտադիր եղան շինել քաղաք և աշտարակ և այս այն նպատակով որ չը զրուին երկրիս երեսին: Բարեշնում՝ աշտարակ շինելով, որոյ գլուխն երկինք պիտի հասնէր, նոքա կամենում էին անան հասնել իրանց համար յաւիտեանիան յիշատակ թողնել երկրիս երեսին, և ակներև է, որ հին պատմագիրը նայում է սորա վերայ, իբրև մեղսական գործողութեան վերայ, իբրև սկայական հպարտութեան և ապստամբութեան վերայ Մի Աստուծոյ դէմ: Նոցա երկիւղն երկրիս երեսին զրուելու մասին ցոյց է տալիս, որ նոցա ճանաչողութեան մէջ, նոցա հոգևոր կեանքի մէջ արդէն սկսել էր տատանումն և հրաժարումն Մի Աստուծամէ (ուրեմն միաստուածութիւնից), արդէն երևում էին բազմաստուածութեան շարժումն, որ շատ աստուածներ, այսինքն տիեզերական զօրութիւնք, մնաք էին գործել նոցա հոգւոյ մէջ այնպէս, որ հեռացրել էին Մի Աստուծուն: Բայց այս ներքին տատանման և վրդուիման ժամանակ, երբ նոր զօրութիւնք և նոր իշխաններ մնալ գործեցին նոցա հոգւոյ մէջ, նոքա իրանք էլ տակաւ առ տակաւ ակելի նրանց անձնատուր եղան, ի ներքուստ տանջուելով այս բաժանմամբ և մեկնելովը Մի Աստուծամէ, նոքա յամառութեամբ որոնում էին արդարեւ մի կապ, որ նրանց միացած պահէր: Այն ժամանակ պատահեցաւ այն, որ Աստուած իջաւ և խառնեց նոցա լեզուներն, արտաքին գործողութեան հետեանքն եղաւ արտաքին բաժանումն և զրուումն: Ի վկայութիւն ներքին խառնակութեան և խռովու-

թեան խառնակեցան լեզուներն ու բարբառները, այնուհետև ծագեցան ազգերը, մի ամբողջի մասերն, որոնք սիրուցան ամեն կողմ, իւրաքանչիւր ազգ իւր լեզուով, որ կարծես խորուցաւ բաժանուեցաւ կենդրոնական Աստուածային բանից, որ վաղ միացնում էր մարդոց և որ այժմ նրանցից հեռանում է: Այն ժամանակ դիցաբանական գործողութեան ասպարիզում յայտ եկաւ բազմաստուածութիւնն, այսինքն ծագեցան ազգային կրօններ, ըստ որում իւրաքանչիւր ազգ ունեցաւ իւր աստուածները: Թէպէտ այս դէպքը յանկարծ կատարուեցաւ, բայց մենք կարող ենք մեզ ներկայացնել, որ նորա գործողութիւնը շարունակուում էին երկար ժամանակամիջոցում: Ազգերը բնակութիւն հաստատում էին դանազան երկիրներում, համեմատ իւրաքանչիւր ազգի հակամիտութեանց և ձգտումներին, որոնք այս կամ այն երկիրն իրանց յարմար գտանում էին: Բազմազանութիւնն, որ պէտք է գործարանաւոր և ներդաշնակ եղանակով զարգանար միութիւնից, աւելի և աւելի անբնական պառակտումն գարձաւ: Ազգերն աւելի և աւելի օտարացան միմեանցից և միմեանց անհասկանալի եղան և նոյս փոխադարձ գիրքը աւելի և աւելի թշնամական դարձաւ: Միայն մի ազգ, այն է Աբրահամից սիրած ազգն Աստուծոյ կոչումով և ընտրութեամբ զատուեցաւ այդ բաժանեալ և խառնակեալ բազմութիւնից և դատարարակուեցաւ մի ճշմարիտ Աստուծոյ հետ հաղորդութիւնը պահպանելու համար՝ իբրև հակադիր տարր հեթանոսաց՝ բազմաստուածեանների իրանց խառնակեալ բարբառներով, որոնք բաժանուեցան Աստուծոյ բանից—խօսիք: Մենք շատ հեռուն կերթայինք, եթէ կամենայինք այստեղ աւելի ուշագրութեամբ հետազօտել հին աւանգութիւնն, որ պահպանել է մեզ համար Ծննդոց գիրքը: Այլ կամենում է աւելի խորին եղանակով հետազօտել այս առարկայն, նրան մենք մասնացոյց կըլինենք Շելլինգի «Գիցաբանութեան պատմութիւն» երկասիրութեան նախբազմաբի վերայ՝ որ բոխնդակում է այս առարկայի մասին խորը խորհրդածութիւնք և բացատրութիւնք, յամենայն դէպս Շելլինգն աւելի խորիմաստութեամբ ըմբռնել է այս խնդիրն, քան ով և իցէ նրանից առաջ: Մենք այստեղ առաջ ենք բերում միայն մի պարագայ:

այսինքն թէ վերոյիշեալ հայեցակէտից զննուած «ազգի» և «ազգայնութեան» գաղափարը բովանդակուած է իւր մէջ ոչ միայն Աստուծոմէ շնորհած և կտրգադրած մի սկզբունքի գաղափար, այլ և Աստուծոմէ հեռացած՝ «հեթանոսական» մի սկզբունքի գաղափար, որ արարածին Արարչից, բնութիւնն հագուց բարձր է գասուծ բովանդակուած է մի գաղափար ազգերի մասին, որոնք ետական առանձնութեամբ բաժանուել են և հեռացել միմեանցից, փոխադարձաբար միմեանց անհասկանալի և թշնամի դառնալու մի գաղափար: Յայտնութեան համար «ազգերը» (ազգայնութիւնք), լեզուների խառնակութիւնն և բազմատուածութիւնն միմեանցից անբաժան գաղափարներ են: Ի միջի այլոց քրիստոնէութեան կոչումն է և՛ ազատել ազգերն այգ անջատման վիճակից, ազգայնութեանց տարբերութիւնքը կազմակերպել, կապել և միացնել ազգերն, նրանց միմեանց հասկանալի անել և հասանելի, զարթուցանելով նոցա մէջ Աստուածութեան ճշմարիտ ճանաչողութիւնը, կրկին միացնելով բազմաբարբառ լեզուներն Աստուծային մի բանով, բոլոր ազգերին ժողովելով և միաւորելով նոր Ագամի՛ իբրև մարդկային սեւեի գլխոյ իշխանութեան ներքոյ, որ ապիս է և վերադարձնուած նրանց ներքին միութիւն: Քրիստոնէութեան այս կոչումն յայտնապէս երևում է արգէն Պենտեկոստէի հրաշալեաց մէջ, որ Նաբելմնի լեզուների խառնակութեան հակադիր պատկերն է: Իւրաքանչիւր ազգ լուծ է այստեղ քարազութիւն իւր սեպհական լեզուով, բայց այս—արգէն նոր լեզու է, քրիստոնէութեան լեզու, որ խօսուած է զանազան բարբառներով և միացնուած է զանազան ազգերին, ժողովելով որանց Քրիստոսի մի, սուրբ և ընդհանրական եկեղեցու մէջ:

Այսպէս ուրեմն ազգային ոգւոյ ազատութիւնն, որոյ մասին էր մեր խօսքը, պայմանաւորուած է նրանով, որ նա ներքին խորը քննադատութեամբ, իբրև մի հոգևոր քաւարանի մէջ, մարքուէր, սրբուէր թէ կրօնական և թէ բարոյական վերաբերութեամբ: Ուստի հարկ է կարծել, թէ ամենքի համար ակնյայտնի պարզ պէտք է լինի, թէ որքան անհիմն է, առանց խորին խորհրդածութեան, առանց ազգայնութեան, քրիստոնէութեան և զիցա-

բանութեան քննադատութեան գործադրութեանը, զորօրինակ  
 չիւսիսային (սկանդինավեան) զիցաբանութիւնը համադասել և  
 խառնել քրիստոնէութեան հետ— մութը և անքննադատ խառնա-  
 կութիւնը որ միայն սխալ գաղափար կարող է կազմել սալ թէ  
 ազգայնութեան և թէ զիցաբանութեան վերայ, ինչպէս և նոյն  
 իսկ քրիստոնէութեան մասին: Արքան ևս նշանաւոր լինի ազգային  
 ինքնաճանաչութեան զարգացման համար, որ ազգը հասկանալով  
 և սիրելով ուսումնասիրէր իւր զիցաբանութիւնն, քանի որ նա  
 նորա մէջ կարող է տեսնել իւր մանկութեան և երիտասարդու-  
 թեան գեղեցիկ գաղափարները, բայց և սնուցէ այս բնական  
 գեղեցիկազոյն գաղափարական պատկերները պէտք է նախ  
 սրբագրուին, ուղղուին, քրիստոնէութեամբ աւտջ քան ի սուր կը  
 լինէր այն մասին, թէ նորա սրբան մեզ համար կարող են և՛ այլ  
 վտեմ՝ նշանանակութիւն ունենալ բացի նպատակաւ և բանաու-  
 տեղծական յիշատակներ լինելուց: